ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2022 թվականի N 344-Ա

ԱԼՅՈՇԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՔՐԻՍՏԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները հաստատելու մասին» N 539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 80, 81 կետերի պահանջները և «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2022թ. օգոստոսի 29-ի եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.«Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Ալյոշա Հայրապետյանին 2022թ. սեպտեմբերի 1-ից նշանակել կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Քրիստինե Պետրոսյանին 2022թ. սեպտեմբերի 1-ից ազատել «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:

3. Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 15-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

31.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ԾՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: CHUKASYAN ROBERT-3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԾՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 31

ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. օգոստոսի 31-ի
N 314 -Ա որոշման

ԿԱԶՄ

«Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանում հանձնման-ընդունման հանձնաժողովի

Մերի Գանդալյան	Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ).
Թամար Ստեփանյան	Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Անուշ Սիմոնյան	Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ.
Թամարա Կարապետյան	Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ.
Արփինե Բաղդասարյան	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ.
Այոշա Հայրապետյան	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն, ընդունող.
Քրիստինե Պետրոսյան	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի նախկին պաշտոնակատար, հանձնող:

8/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ **Է. Մարտիրոսյան**